մը գիտնականներ և բանասերներ ներկա էին բացման հանդեսին։ Նույն օրը ցուցադրվեցավ Վեհին Հայ մանրանկարչության արվեստի վերաբերյալ հավաքածոն, որ մեծապես դնահատվեցավ պրոֆ. Գրապարի նման մեծ գիտնականներե։ Վեհափառը հայ և արաբ բժշկական գիտության հարաբերության մասին ալ դասախոսություն մը տվավ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցվո մեջ։

Սեպտեմբերի 21-ին, երեկոյան, Վեհը Արտավազդ և Դերենիկ Սրբազաններու ուղեկցությամբ՝ մեկնեցավ Մարսելլ։

Նույն օր կեսօրե վերջ դարձյալ Պաշե շոգենավով Վեհը կշարունակե իր ճամբորդությունը։ Արտավազդ Սրբազան, որ Վեհին Ֆրանսա ժամանումեն ի վեր միշտ ընկերակցած էր Անոր, մինչև շոգենավին մեջ Վեհին համար հատկացված հարկաբաժինը եկավ քահանա հայրերու և վարչության անդամներուն հետ և բարի երթ մաղթեց Անոր։ Արտավազդ Սրբազան, Մարսիլիո, Նիսի, Լիոնի և Փարիզի Հայ եկեղեցվո վարչությունները, ինչպես նաև հայ ազգայիններ ամեն ճիգ և աշխատանք թափեցին Վեհին հանգստության և կազդուրման համար և պետք եղած ծախքերը ավելիով ըրին։

Ծովային ճամբորդությունը տևեց ամբողջ շաբաթ մը, և անցավ շատ հաճելի։

Սեպտեմբեր 24-ին Նաբուլի նավ ելավ նաև Հոգեշնորհ Տ. Շահե Արնդա, որ Վեհին հրահանդին համաձայն, կվերադառնար Անթիլիաս։

Սեպտեմբերի 29-ին, ուրբաթ առտու, Վեհափառը հասավ Բեյրութ ու ողջունվեցավ Իր սիրելյալ հոտեն, ջերմ խանդավառությամբ։

ՈՒՂԵԿԻՑ

(Քաղված է կրճատումով Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրի 1950 թվի սեպտ.–հոկտ. համարից)։

ՈՒՂԵՐՁ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԹԹՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

26 Նոյեմբեր 1950-ին

Մոտ երեք հազար փարիզահայեր, հավաքված Պլեյելի սրահին մեջ, Սովետական Սոցիալիստական Հայաստանի երեսնամյակի տոնակատարության առթիվ ընդունեցան հետևյալ ուղերձը.

Մենք այսօր ուրախությամբ կնշենք, որ Սովետական Հայաստանի 30 տարվա հոյակապ նվաճումներու հետ զուգընթաց, Հայաստանյայց Եկեղեցին զարգացավ և ամրապնդվեցան իր կապերը Սփյուռքի հայ ժողովուրդի և եկեղեցիներու հետ։

Ան զորավիգ հանդիսացավ Հայրենական պատերազմի ընթացքին Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին։

Ան նույնպես զորավիգ հանդիսացավ Ներդաղթի սրբազան գործին իրականացման։

Այժմ մենք սրտի անհուն բերկրանքով կնշենք Հայաստանյայց Եկեղեցվո Հայրապետին վճռական դերը և անոր խաղաղության պաշտպանությունը, և մենք՝ հայրենակարոտ հավատացյալ փարիզահայերս, ներշնչված խաղաղասիրական զգացումներե, աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդներու հետ միասնաբար կտանինք խաղաղության պաշտպանության նույն պայքարը մարդկության բարօրության համար, այսպե՛ս նպաստելով մեր վերածնվող Հայրենիքին և մեր Եկեղեցվուն։

Փա՜ռք բազմադարյան Հայաստանյայց Եկեղեցվուն։

Փա՜ռք Գրիգոր Լուսավորչի աթոռակալ ծերունազարդ Հայրապետին՝ Գեորգ Զ.-ին։

Փա՜ռք վերածնվող մեր Հայրենիքին և հայ անմահ ժողովուրդին։